

ՓՈՐՃԱԳԵՏՆԵՐԻՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Փորձագիտական հանձնախմբերում աշխատելու ինքնաառաջադրման սկզբունքով ընդգրկվելու հայտ ներկայացնել կարող են կինոուրտում առնվազն 5 (հինգ) տարվա մասնագիտական փորձ ունեցող ստեղծագործական և ոչ ստեղծագործական հետևյալ մասնագիտությունների ներկայացուցիչներ՝ կինոպրոդյուսեր (կինոարտադրող), կինոռեժիսոր, կինոսցենարիստ, կինոօպերատոր, կինոնկարիչ, մոնտաժի ռեժիսոր/կինոխմբագիր, կինոգետ, որոնք հեղինակել են.

- 1) լիամետրաժ Նախագծերի հանձնախմբում ընդգրկվելու համար՝ առնվազն մեկ լիամետրաժ Կինոնկար, կինոգետները՝ 3 (երեք) վերլուծական հոդված,
- 2) կարճամետրաժ Նախագծերի հանձնախմբում ընդգրկվելու համար՝ առնվազն մեկ լիամետրաժ կամ երկու կարճամետրաժ Կինոնկար, կինոգետները՝ 3 (երեք) վերլուծական հոդված:

Նախապատվությունը տրվում է ներքոնշյալ միջազգային ձեռքբերումներից որևէ մեկն ունեցող թեկնածուներին

1. մասնակցություն միջազգային կինոփառատոնի
2. անդամակցություն միջազգային կինոփառատոնի ժյուրիի
3. միջազգային կինոփառատոնի մրցանակ
4. համաարտադրության փորձ
5. կինոգետները՝ կինոարվեստի վերաբերյալ աշխատություն կամ վերլուծական հոդվածների ժողովածու կամ միջազգային որևէ լեզվով արտերկրում հրատարակված վերլուծական հոդված:

Ծանոթություն՝

Բոլոր թեկնածուները պետք է կինոկենտրոնին տրամադրեն ընդլայնված ինքնակենսագրական՝ հանգամանորեն ներկայացնելով իրենց կրթական, մասնագիտական և առաջխաղացման բոլոր մանրամասները: Փորձագետների տվյալների շտեմարանում ընդգրկված թեկնածուներին կինոկենտրոնը ներկայացնում է հանձնախմբում աշխատելու և Նախագծերը գնահատելու կարգերը, ճշտում է տվյալ մրցույթում ներկայացվելիք Հայտերի հետ նրանց առնչություն ունենալու հարցը, ծանոթացնում է փորձագիտական հանձնախմբի անդամի հետ կնքվելիք պայմանագրի պայմաններին:

Կինոկենտրոնի և փորձագիտական հանձնախմբի անդամի միջև կնքված պայմանագիրը պարտադիր պարունակում է հետևյալ պայմանները.

1. Փորձագիտական հանձնախմբի անդամը չի կարող լինել կինոկենտրոնի կամ լիազորված պետական մարմնի աշխատակից:
2. Փորձագիտական հանձնախմբի անդամը և նրա հետ փոխկապակցված անձինք (հայրը, մայրը, ամուսինը, կինը, ամուսնու և կնոջ ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, քրոջ ու եղբոր ամուսինը և երեխաները, ինչպես նաև՝ նրանց ղեկավարած կազմակերպությունները ու նրանց աշխատակիցները) հանձնախմբերում անդամի ընդգրկվածության ողջ ժամանակահատվածի համար չեն կարող մասնակցել տվյալ անվանակարգի մրցույթին և չեն կարող ընդգրկված լինել տվյալ անվանակարգի մրցույթին ներկայացված Նախագծերի հիմնական ստեղծագործական կազմերում:

3. Նման հանգամանքների ի հայտ գալու պարագայում այդ անդամները զրկվում են հանձնախմբերում աշխատելու հնարավորությունից և կինոկենտրոնը միայն այդ տեղի համար ընտրում է նոր թեկնածու:
4. Փորձագիտական հանձնախմբերի անդամները պարտավորվում են իրենց տրամադրված նյութերի գաղափարները, մոտիվները, մտահղացման և այլ ստեղծագործական գաղտնիքները չօգտագործել այլ նպատակներով, բացի սույն կանոնակարգով իրենց տրամադրված նյութերը ուսումնասիրելու և գնահատելու համար սահմանված նպատակներից:
5. Անհատական աշխատանքի ընթացքում փորձագիտական հանձնախմբի անդամը անհրաժեշտության դեպքում կարող է որևէ հարց ճշտելու համար դիմել խորհրդատուի (գիտնականի, ռազմագետի, պատմաբանի, բժշկի և այլն) ու ստանալ զուտ նեղ մասնագիտական եզրակացություն: